ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԶԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգեզարդ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Այգեզարդ, (0235)61077, aygezard.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 1

ԱՅԳԵԶԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել 2017 թվականի հունվարի 20-ի ավագանու նիստի օրակարգի հետևյալ հարցերը.

1.ԱՅԳԵԶԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

2.ԱՅԳԵԶԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021ԹԹ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԴՈՅԱՆ ՖՐԻԿ
2. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԳԵՂԱՆՈՒՇ
3. ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
4. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ
5. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԳՐԻԳՈՐ
6. ՍԱՐԳՍՅԱՆ ԽԱՉԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԶԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգեզարդ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Այգեզարդ, (0235)61077, aygezard.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
20 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 2-Ն

ԱՅԳԵԶԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

2017 թվականի Այգեզարդ համայնքի տարեկան բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

1.01.01.2017թ-ի դրությամբ վարչական բյուջեի տարեսկզբի մնացորդը 5.114.977 դրամի փոխարեն կազմում է 5.125.693 դրամ: Տարբերությունը կազմում է 10.716 դրամ:

Բյուջեի եկամտային մասում 16.01.2017 մուտքագրվել է եկամուտ 900415156117 հաշվեհամարին՝ հողի օտարումից մուտքեր 265.275 դրամ, 900415156182 հաշվեհամարին, այլ հիմնական միջոցների օտարումից մուտքեր(շենքի օտարում)՝ 281.776դրամ:Ընդամենը ՝ 547051 դրամ:

2017թ. ֆոնդային բյուջեի ծախսային մասում 547051 դրամից ավելացնել մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում ծրագրի 900412156458 հաշվի 5113 հոդվածին ավելացնել 525.051 դրամ , 5134 հոդվածին 22.0հազ. դրամ փողոցների հիմնանորոգման նպատակով:

2.2017թվականի ֆոնդային բյուջեի եկամտային մասը բաշխել ըստ հետևյալ հոդվածների.

5113-շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում հոդվածում՝ 8.225.051դրամ,

5122-վարչական սարքավորումներ հոդվածում՝400.000դրամ,

5129-այլ մեքենաներ և սարքավորումներ հոդվածում՝545.000դրամ,

5133-գեոդեզիական քարտեզավորումհոդվածում՝4.000.100,60դրամ

5134-նախագծահետազոտական ծախսեր հոդվածում՝ 382.000դրամ

Ընդամենը՝ 13.552.151,60դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Չեռնպահ -0

1. ԱԿՈՅԱՆ ՖՐԻԿ
2. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԳԵՂԱՆՈՒՇ
3. ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
4. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ
5. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԳՐԻԳՈՐ
6. ՍԱՐԳՍՅԱՆ ԽԱՉԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԶԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգեզարդ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Այգեզարդ, (0235)61077, aygezard.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 3-Ն

ԱՅԳԵԶԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021ԹԹ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել Այգեզարդ համայնքի 2017-2021թթ հնգամյա զարգացման ծրագիրը՝ համաձայն հավելվածի.

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԴՈՅԱՆ ՖՐԻԿ
2. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԳԵՂԱՆՈՒՇ
3. ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
4. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ
5. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԳՐԻԳՈՐ
6. ՍԱՐԳՍՅԱՆ ԽԱՉԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հավելված
20.01.2017թ. ավագանու
նիստի թիվ 3-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ԱՅԳԵՁԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ

ՀՆԳԱՍՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

2017թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ 3
1. ՀԱՄԱՅՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ 3
1.1 Պատմական ակնարկ 3
1.2 Աշխարհագրական դիրքն ու բնակլիմայական պայմանները 5
2. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ 5
2.1 Ժողովրդագրություն 5
2.2 Քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքների պաշտպանություն 6
2.3 Ֆինանսական ոլորտ 6
2.4 Հասարակական կարգի պահպանություն 6
2.5 Հանրային միջոցառումների կանոնակարգում 7
2.6 Պաշտպանության կազմակերպում 7
2.7 Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն 8
2.8 Հողօգտագործում 9
2.9 Հաղորդակցություն , տրանսպորտ և Կապ 9
2.10 Առևտուր և ծառայություններ 10
2.12 Կրթություն 10
3.13 Մշակույթ ..... Error! Bookmark not defined.
2.13 Առողջապահություն 12
2.14 ֆիզիկական կուլտուրա և սպորտ 12
2.15 Աշխատանքի և սոցիալական ծառայություն 13
2.16 Գյուղատնտեսություն 13
2.17 Բնության և շրջակա բնական միջավայրի պահպանություն 14
2.18 Արտաքին կապեր և հարաբերություններ 14
2.19 Համայնքի ձեռներեցության ոլորտները 14
3.Համայնքի բյուջեն 14
4.ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ 16
5.ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ 18
5.1Տեսլականը 18
5.2Նպատակը 19
5.3ՈՒԹՀՍ (SWOT) ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 19
6.ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ 23

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ

Այգեզարդ համայնքի ղեկավար՝ Արթուր Մանուկյան

Զարգացման հնգամյա ծրագիրը առաջիկա հինգ տարիների համար հանդիսանալու է Այգեզարդ համայնքի զարգացման հիմնական փաստաթղթերից մեկը: Հնգամյա զարգացման ծրագիրը, ելնելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներից՝ մշակում է համայնքի ղեկավարը և նրա աշխատակազմը, քննարկվում և հաստատվում է համայնքի ավագանու կողմից և դրվում է գործողության մեջ: Այն ներկայացնում է համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունը, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծում և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացում:

Այգեզարդ համայնքի ներդաշնակ և համաչափ զարգացման, համայնքի բնակիչների բարեկեցության ապահովման համար առաջիկա հինգ տարիներին հնգամյա զարգացման ծրագիրը հանդիսանալու է մեր ամենօրյա աշխատանքային փաստաթուղթը:

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Արարատի մարզի Այգեզարդ համայնքը գտնվում է Արարատյան դաշտում՝Արարատի մարզկենտրոնից 7կմ արևելք, ծովի մակարդակից 980 մ բարձրության վրա: Կլիման չոր խիստ ցամաքային է: Ձմեռները սկսվում են դեկտեմբերի սկզբին, հունվարյան միջին ջերմաստիճանը տատանվում է 10-ից -30: Ամառը տևական է՝ մայիսից մինչև հոկտեմբեր, օդի միջին ամսական ջերմությունը հասնում է 24-ից 26 աստիճան, իսկ առավելագույնը՝ 38 աստիճան:
Համայնքն ունի 1 դպրոց, արվեստի դպրոց, գրադարան, մանկապարտեզ, մշակույթի տուն, բուժամբուլատորիա, կապի բաժանմունք:
Համայնքի տնտեսության մասնագիտացման ճյուղը գյուղատնտեսությունն է, համախառն բերքի մեծ մասը տալիս է խաղողագործությունը և պտղաբուծությունը:

1.1 Պատմական ակնարկ

Արարատի մարզի Այգեզարդ գյուղը հիմնադրվել է 1826թվականին:
Այգեզարդի նախկին բնակիչները եղել են Պարսկաստանի ,Ատրպատականի, Խոյի և Ալմաստ գավառներից: Նրանց ներգաղթը կազմակերպում է Պարսկաստանում ռուսական դեսպան Գրիբոյեդովը՝ 1828-1829թթ ռուս-պարսկական պատերազմից հետո 1930-1931թվականներին: Ներգաղթածներին բնակեցնում են Արաքսի առափնյա գյուղերում: Մեր նախնիներին բաժին է ընկնում ներկայիս Արարատի մարզի Շահումյան գյուղի ուղղությամբ ընկած մասում՝ Արաքսի ափին:
Բնակատեղը կոչվել է դարղալու,սակայն տեղի անբարենպաստ պայմանների պատճառով 1885թվականին բնակիչները տեղափոխվել են ներկայիս տարածքը :Սկզբնական շրջանում գյուղն ունեցել է շուրջ 100 տնտեսություն: Բնակչության լեզուն խոյի բարբառն է : Մինչև

1935թվականը գյուղը կոչվել է Գինեվետ , 1935թվականից կոչվել է Դարղալու , եղել է Վերին և Ներքին Դարղալու, 1949թվին Անաստասավան՝ ի պատիվ Անաստաս Միկոյանի, 1958թվականից վերանվանվել է և մինչև օրս կոչվում է **Այգեզարդ**: Համայնքի բնակչության հիմնական մասի արմատները եղել են խոյից և Սալմաստից, այնուհետև 1920-22թվականներին բնակություն են հաստատել 1915թվականին եղեռնից փրկված ընտանիքները , 1946թվականին՝ Պարսկաստանից հայրենադարձվածները:

Այգեզարդը գտնվում է ՀՀ արևմտյան մասում Արարատի մազկենտրոնից 7կմ արևելք: Ծովի մակերևույթից միջին բարձրությունը 980մ : Միջին տարեկան ամենաբարձր ջերմաստիճանը հուլիս ամսին +42^0 , իսկ ամենացածրը հունվար,փետրվար ամիսներին -8^0 , 2002թվականին՝ -34^0:

Տեղումների քանակը 250-ից, 300 մմ:

Գյուղի առաջին դպրոցը եղել է աղյուսաշեն , հիմնվել է 1932թվականին 1960-61թվականներին փոխարինվել է այժմյան տուֆակերտ , հարմարավետ դպրոցով, այստեղ աշխատող մանկավարժները բոլորն էլ ունեն բարձրագույն կրթություն: Այգեզարդը ունի մշակույթի տուն, որը կառուցվել է 1937թվականին վերակառուցվել է 1950թվականին , սակայն այն ներկայումս ունի կապիտալ նորոգման խիստ անհրաժեշտություն:

Մշակույթի տունը երիտասարդության և մեծահասակների ժամանցի միակ օջախն է : Մշակույթի տանը կից գործում էր «Այգեզարդ » պարի խումբը , որը 2004թվականին պարգևատրվել էր «Դար-21» մեդալով և բազմաթիվ պատվոգրերով :

Գյուղում գործում է բուժ ամբուլատորիա տեղացի բարձրագույն և միջին մասնագիտական կրթություն ունեցող կադրերով:

Գյուղն ունի փոստ, գործող գրադարան՝ 10825 կտոր գրականությամբ, գործող մանկապարտեզ երկու խմբանի , որտեղ հաճախում են 60-65 երեխա , արվեստի դպրոց:

Մանկապարտեզի շենքը վերանորոգված է նոր նախագծով , պետ բյուջեի միջոցներով :

Համայնքում ծնվել են գիտության նշանավոր մարդիկ՝

1.Արարատ Սահակի Ղարիբյան-ակադեմիկոս
2.Պարույր Տիգրանի Սահակյան-բանասիրական գիտությունների դոկտոր
3.Օնիկ Տիգրանի Սահակյանը-գիտությունների թեկնածու
4.Խաչատուր Անդրեասի Ավետիսյան-աշխարհագրական գիտությունների թեկնածու
5.Սանդրո Գրիգորի Հայրապետյան- տեխնիկական գիտությունների թեկնածու
6.Արարատ Սահակի Դիլոյան-տեխնիկական գիտությունների թեկնածու
7.Հայկ և Մինաս Մինասյաններ-դասախոսներ
8.Սոս Սիսակյան - բժշկական գիտությունների դոկտոր
9.Սամվել Սիսակյան- բժշկական գիտությունների թեկնածու
10.Աշոտ Աբգարի Բաղալյան -տնտեսագիտության գիտությունների թեկնածու
11.Արիստակես Սահրադյան-գնդապետ
12.Արկադի Սոկրատի Մանուկյան-միլիցիայի գնդապետ
13.Քաջիկ Մեջլումյան -գնդապետ
14.Վալոդյա Կարապետի Բարսեղյան-սպորտի վաստակավոր մարզիչ
15.Գոռ Վալոդյայի Բարսեղյան-ստենդային հրաձգության վաստակավոր մարզիչ
16.Էմմա Աբգարի Բաղալյան-«Գուսան կաղնի» -երգահան

Այգեզարդն ունեցել է 8 սոցիալիստական աշխատանքի հերոս

1.Հովհաննիսյան Պայծառ -27.09.1949թ.
2.Մուրադյան Անդրանիկ -16.10.1950թ.
3.Ասլանյան Մարիամ-16.10.1950թ.
4.Գրիգորյան Փեփրոնե-16.10.1950թ.
5.Կարապետյան Սիսե -16.10.1950թ.
6.Խաչատրյան Հայկ -16.10.1950թ.
7.Ստեփանյան Ռոզա -30.04.1966թ.
8.Սարգսյան Հմայակ -05.04.1971թ.

1950թվականի Այգեզարդի «Փարիզյան Կոմունայի» անվան կոլտնտեսությունը գյուղատնտեսական լավագույն արտադրության ցուցանիշների համար պարգևատրել է «Կարմիր դրոշի» շքանշանով :
1977թվականին կոլտնտեսության բրիգադավար Պարույր Հովնաթանյանը ստացել է պետական մրցանակի դափնեկրի կոչում:
«Լենինի » շքանշանով պարգևատրվել է 10, «Կարմիր դրոշի » շքանշանով շուրջ 100 կոլտնտեսականներ :
9-րդ բրիգադի բրիգադավար Ալբերտ Ավետիսյանը պարգևատրվել է ժող տնտեսության ցուցահանդեսի արծաթե մեդալով :
Ունենք աշխատանքային փառքի 2-րդ աստիճանի շքանշանով պարգևատրվածներ :
1941-45թվականներին Հայրենական Մեծ պատերազմին մասնակցել են ՝ 180 Այգեզարդցի, չեն վերադարձել 98-ը:
Արցախյան ազատամարտին Այգեզարդ գյուղից մասնակցել են 30 Այգեզարդցի, ազատամարտիկ Ավետիս (Կոստան) Հարությունյանը զոհվել է Բուզլուխում:

1.2 Աշխարհագրական դիրքն ու բնակլիմայական պայմանները

- Հեռավորությունը մայրաքաղաք Երևանից- 30 կմ
- Մարզկենտրոն Արտաշատ ից 7կմ
- Բարձրությունը ծովի մակերևույթից 980 մ

2. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

2.1 Ժողովրդագրություն

2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ համայնքը ունի 893 տնային տնտեսություն, 3082 առկա բնակիչ: Ըստ սեռահասակային դասակարգման՝ բնակչության 49%-ը կազմում են տղամարդիկ, 51 %-ը՝ կանայք ու աղջիկներ:
Բնակչության կառուցվածքը, ըստ տարիքի.

Բնակչության կառուցվածքը, ըստ տարիքի	0-5	6-15	16-18	19-64	65 և ավելի
Բնակիչների թիվը	168	375	139	2186	214

Գործազրկության մակարդակը համայնքում կազմում է 60 %:

Տարի	Ծնունդներ տարվա ընթացքում	Մահացություններ	Ամուսնություններ	Ամուսնալուծություններ
2014	50	44	20	1
2015	44	30	14	3
2016	48	34	16	2

2.2 Քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքների պաշտպանություն

Համայնքի բնակիչների և տնտեսվարող սուբյեկտների իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու նպատակով համայնքապետարանում պարբերաբար կազմակերպվում են համայնքի ղեկավարի և ավագանու անդամների ընդունելության օրեր՝ ամեն օր երկուշաբթիից-ուրբաթ ժամը 9^{00} –ից մինչև 18^{00}-ն: Յուրաքանչյուր եռամսյակ ընդունելիության են մասնակցում 50-60 բնակիչ: Համայնքի քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների համար կատարվում է իրավախորհրդատվական աշխատանք, քննարկվում նրանց իրավունքների խախտումների վերաբերյալ գանգատներն ու դիմումները, աջակցում նրանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը:

Պարբերաբար դրամական և այլ օգնություն է տրամադրվում կարիքավոր ընտանիքներին, զոհված ազատամարտիկների ընտանիքներին, ծնողազուրկ երեխաներին, հաշմանդամներին, Համայնքում հուղարկավորությունների համար տրամադրվում է հուղարկավորության համար դրամական աջակցություն՝ 50000 դրամ: Ուշադրության կենտրոնում է գտնվում համայնքապետարանի կողմից կնքվող պայմանագրերի, ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների օրինականության ապահովումը, անհրաժեշտության դեպքում համայնքի շահերը ներկայացվում են այլ անձանց հետ փոխհարաբերություններում, ինչպես նաև դրանք պաշտպանվում են դատարանում (հայցվոր, պատասխանող, երրորդ անձ):

2.3 Ֆինանսական ոլորտ

Համայնքի ղեկավարը ֆինանսների բնագավառում

1) կազմում և համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքի բյուջեի նախագիծը, դրանում առաջարկվող փոփոխություններն ու ապահովում է բյուջեի կատարումը, որի վերաբերյալ եռամսյա հաղորդումներ և տարեկան հաշվետվություն է ներկայացնում համայնքի ավագանուն.

2) տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու վերաբերյալ որոշման նախագծերը ներկայացնում է ավագանու հաստատմանը.

3) համայնքի կողմից իրականացվող ծառայությունների դիմաց կատարվող վճարների դրույքաչափերի վերաբերյալ որոշման նախագիծը ներկայացնում է ավագանու հաստատմանը.

4) տնօրինում է համայնքի բյուջեի միջոցները, ապահովում է դրանց նպատակային օգտագործումը.

5)ստորագրում է ֆինանսական փաստաթղթերը:

Համայնքի ղեկավարը սույն բնագավառում, սույն օրենքով սահմանված դեպքերում և կարգով, իրականացնում է պետության պատվիրակած հետևյալ լիազորությունները.

1) օրենքով սահմանված կարգով կազմակերպում է գույքահարկի ու հողի հարկի գանձումը, ինչպես նաև կազմակերպում է տեղական տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն համարվող հողերի, համայնքի սեփականություն համարվող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը.

2) հարկերը և օրենքով սահմանված վճարումները չվճարող անձանց նկատմամբ, օրենքով սահմանված կարգով, կիրառում է համապատասխան միջոցներ:

2.4 Հասարակական կարգի պահպանություն

Համայնքի ղեկավարը հասարակական կարգի պահպանության բնագավառում իրականացնում է պետության կողմից պատվիրակված հետևյալ լիազորությունը, համայնքի տարածքում գործող ոստիկանությունից ստանում է աջակցություն, որը պարտադիր կատարվում է: Համայնքում

առկա է ոստիկանության հենակետ: Համայնքի ղեկավարը անձանց, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ենթարկում է վարչական պատասխանատվության: Իրենց պարտականությունները խախտած զինապարտ քաղաքացիների վերաբերյալ տեղեկություններ ունենալու դեպքում համայնքի ղեկավարին անհապաղ ներկայացվում է առաջարկություն տարածքային զինվորական կոմիսարիատին այդ մասին գրավոր տեղեկատվություն տրամադրելու համար: Համայնքապետարանի աշխատակազմը մասնակցում է նախազորակոչային, զորակոչային տարիքի անձանց և պահեստազորայինների զինվորական հաշվառման բնագավառում յուրաքանչյուր ամիս զինկոմիսարիատ է ներկայացնում տեղեկատվություն բացակա զինապարտների մասին :

2.5 Հանրային միջոցառումների կանոնակարգում

Համայնքում անցկացվող հանրային միջոցառման անցկացման համար սահմանվող սահմանափակումները չեն կարող աղավաղել հանրային միջոցառման նպատակը կամ հանրային միջոցառման մասնակիցների տարածքային մեկուսացման, ինչպես նաեւ հանրային միջոցառման անցկացման ժամանակի փոփոխության միջոցով էականորեն նվազեցնել դրա պոտենցիալ ներգործությունը կազմակերպիչների նախընտրած հանրային լսարանի վրա կամ որևէ այլ ձևով հանգեցնել հանրային միջոցառման փաստացի արգելմանը: Տեղեկացումն ի գիտություն ընդունելու մասին համայնքի ղեկավարն անհապաղ տեղեկացնում է կազմակերպիչներին եւ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը, ինչպես նաեւ դրա մասին գրություն է փակցնում տեղական ինքնակառավարման մարմնի վարչական շենքում՝ բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում: Հանրային միջոցառման ընթացքում պարտավոր է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել հանրային միջոցառման բնականոն ընթացքն ապահովելու համար, մասնավորապես հանրային միջոցառման մասնակիցների կողմից բռնի գործողությունները կանխելու, բռնությունից զերծ մնալու եւ ուժի կիրառմանը պատրաստ մասնակիցներից սահմանազատվելու կոչերի միջոցով, իրավունք ունի դիմելու ոստիկանության ծառայողներին՝ հանրային միջոցառման անցկացման վայրից հարկադիր դուրս բերելու այն անձանց, ովքեր կոպտորեն խախտում են հանրային միջոցառման բնականոն ընթացքը, պարտավոր է հավաքի մասնակիցներին անմիջապես տեղեկացնել հանրային միջոցառման բնականոն ընթացքն ապահովելու վերաբերյալ ոստիկանության ծառայողների պահանջների մասին:

2.6 Պաշտպանության կազմակերպում

Համայնքապետարանի պատասխանատու անձիք մասնակցում են Քաղաքացիական պաշտանության պլանների մշակման համակարգմանը, որը կշարունակվի՝ անցնելով դրանցում ներգրավված կառույցների՝ իրենց մասնակցության ձևաչափի վերաբերյալ իրազեկության ավելի բարձր մակարդակի:

Համայնքապետարանում աշխատակազմի քարտուղարը վարում է համայնքի զինապարտների գրանցամատյան, համայնքի ղեկավարին է ներկայացնում առաջարկություն զինապարտների վերաբերյալ ցուցակները, ինչպես նաև ըստ բնակության վայրի հաշվառումից հանվելու, աշխատանքի ընդունվելու և աշխատանքից ազատվելու վերաբերյալ տվյալները տարածքային զինավորական կոմիսարիատ ներկայացնելու համար,մասնակցում է զորակոչի, զորահավաքի ու վարժական հավաքների կազմակերպման աշխատանքներին:

2.7 Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն

Գործունեության հիմնական ոլորտները

- Քաղաքաշինական փաստաթղթերի (գլխավոր հատակագիծ, թաղամասերի գոտիավորման և կառուցապատման նախագծեր) պատվիրում և դրանց անշեղորեն իրագործում:
- Համայնքի տարածքում կառուցապատողների քաղաքաշինական փաստաթղթերի նախապատրաստում և հաստատում:
- Համայնքային հողերի աճուրդային վաճառքի և կառուցապատման իրավունքի մրցույթի գործընթացների նախապատրաստում և իրականացում:
- Ինքնակամ կառույցների հաշվառում, օրինականացում և տնօրինում:

- Համայնքի տարածքում շինարարական աշխատանքների թույլտվությունների դիմաց ապահովվում է բյուջեի մուտքերը տեղական տուրքերի և վճարների գծով:
- Մշակված նախագծերի հիման վրա հեղինակային հսկողություն է սահմանվում համայնքի տարածքում իրականացվող շինարարական աշխատանքների նկատմամբ:
- Ուժեղացվում է հսկողությունը ապօրինի շինարարության նկատմամբ և հասնում դրա իսպառ վերացմանը:
- Նախատեսվում է կատարել գյուղի կենտրոնի , գբոսայգու, մարզադաշտի
- բարեկարգման աշխատանքներ:

Բնակարանային ֆոնդ

	Բնակարաններ և տներ	Քանակը	Զբաղ.տարածքը(հա)	Մակերեսը (քմ)
1	Առանձնատներ	674		138000
2	Բազմաբնակարան շենքեր	1		445
3	Ընդամենը	675		138445

Ենթակառուցվածքներ

	Ենթակառուցվածք	Երկարություն (կմ)
1	Ջրամատակարարման ցանց	13.4կմ
2	Կոյուղու ցանց	-
3	Գազաբաշխիչ ցանց	3.5կմ
4	էլեկտրամատակարարման ցանց	14.8կմ-04կվ,4.4կմ -10.0կվ

2.8 Հողօգտագործում

Համայնքի հողերն ըստ նշանակության	ՀԱ
Գյուղատնտեսական	3983.34
Բնակավայրի հողեր	141.260
Արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության	10.450
Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր	6.160
Հատուկ պահպանվող տարածքների հողեր	35.680
Ջրային հողեր	27.000
Ընդամենը	4216.100

2.9 Հաղորդակցություն, տրանսպորտ և Կապ

1.Համայնքում տեղակայված են Յուքոմի ,Բիլայնի և Վիվա Սել ՄՏՍ-ի կայաններ,որոնք մատուցում են մատչելի ծառայություններ համայնքին:

2.Համայնքապետարանը և բնակչության զգալի մասը օգտվում են ինտերնետ կապից:

3.2017-2021թթ. նախատեսվում է շարունակել ներհամայնքային ճանապարհների բարեկարգման աշխատանքները: Համայնքի համար կարևորագույն և առաջնային խնդիր է հատկապես կենտրոնական Ա.Ղարիբյան փողոցի մնացած հատվածի 1.7 կմ ասֆալտապատումը.դաշտամիջյան և գյուղամիջյան ճանապարհների հարթեցումը և խճապատումը ,համայնքապետարանի մերձակա տարածքի ճանապարհների ասֆալտապատումը:

4.Նախատեսվում է բնակչության հետ համայնքի ղեկավար անձանց անմիջական հանդիպումների, քննարկումների միջոցով բնակչության լայն խավերին առավելագույնս ներգրավել հիմնախնդիրների բարձրացման և դրանց համարժեք լուծումներ տալու գործին:

5.Համայնքապետարանում ներդրված վեբ-տեխնոլոգիաների վրա հիմնված Համայնքային Կառավարման Տեղեկատվական Համակարգը (ՀԿՏՀ) հնարավորություն է տալիս ավտոմատացնել և արագացնել Տեղական Ինքնակառավարման աշխատատար շատ գործընթացներ, մասնավորապես՝ բյուջետավարումը և գործավարությունը: ՀԿՏՀ-ն առաջիկա տարիներին կընդգրկի ՏԻՄ լիազորությունների շրջանակում համակարգման ենթակա նոր բնագավառներ: Բնակչությանը տեղեկատվություն է տրամադրում, կօգտագործի ՀԿՏՀ-ի ռեսուրսները՝ իր աշխատանքները բարձր մակարդակով կազմակերպելու համար: Ներդնելով էլեկտրոնային ստորագրության փաթեթը՝ մարզպետարանի, նախարարությունների և համայնքների հետ փաստաթղթաշրջանառության գործընթացում, համայնքն արդեն իսկ ներգրավվել է էլեկտրոնային կառավարման համապետական համակարգում: Կշարունակվի զինապարտ քաղաքացիների հաշվառման գրանցամատյանի վարումը՝ տեղական զինկոմիսարիատի և ռեգիստրի հետ համագործակցությամբ: Վերոհիշյալ խնդիրների լուծումը հնարավորություն կտա բարձրացնել գործունեության հրապարակայնությունն ու

թափանցիկությունը համայնքի անդամներին՝ առավել ակտիվորեն մասնակցել համայնքի կառավարմանը:

1	Պետ. ենթակայության ճանապարհներ (երկարություն, կմ, որից՝ ասֆալտապատ)	750մ
2	Համայնքային ենթակայության ճանապարհներ (երկարություն, կմ, որից՝ ասֆալտապատ)	3 կմ
3	Փոստային բաժանմունքներ (քանակը)	1 Փոստային ինդեքս 0709
4	Երևան (երթուղիների թիվը, տրանսպորտային միջոցների տեսակը և քանակը)	1.Երևան-Քաղցրաշեն միկրոավտոբուս
5	Բջջային հեռախոսակապ(առկայությունը՝ այո/ոչ, բաժանորդների թիվը)	Արմենտել,Վիվա-Սել ՄՏՍ,Օրանժ
6	Ինտերնետ(առկայությունը՝ այո/ոչ)	այո

2.10 Առևտուր և ծառայություններ

Համայնքում գործում է 10 առևտրի սրահ, որից 8-ը՝ խառը արդյունաբերական, 2-ը՝ թունաքիմիկատների,1 վարսավիրանոց, 1 կահույքի արտադրամաս: Համայնքապետարանի համապատասխան աշխատողը պարբերաբար վերահսկողություն է իրականացնում առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում:

2.11 Կրթություն

Համայնքի կրթական համակարգը ներառում է նախադպրոցական դաստիարակության և ընդհանուր միջնակարգ բնագավառները: Նախադպրոցական դաստիարկությունն իրականացվում է «Այգեզարդ ՀՈԱԿ» մանկապարտեզում: 2009-2010թվականներին մանկապարտեզի շենքը կապիտալ վերանորոգվել է և անցկացվել է ջեռուցման համակարգ:Բնակչության կողմից առաջարկվել է ևս մեկ խումբ ավելացնել,որի համար շենքային պայմանները չեն բավարարում: Ընդհանուր միջնակարգ կրթությունը իրականացվում է Ա.Ղարիբյանի անվան միջնակարգ դպրոցում: 2016 թվականին ՀՀ Կառավարության պետական բյուջեի միջոցների հաշվին վերափոխվել է դպրոցի պատուհանները,մուտքի դուռը վերանորոգվել է տանիքը ,այն գտնվում է բավական էբարվոք վիճակում: Անհրաժեշտ է առաջիկա տարիների ընթացքում վերանորոգել դպրոցի մարզադահլիճը, կաթսայատունը

Համայնքի կրթական հաստատությունները

Ա. Կրթական հաստատությունների մասին տեղեկատվություն

	ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ	ՄԻՋՆԱԿԱՐԳ դպրոց	ԱՐՎԵՍՏԻ դպրոց
Հաստատությունների թիվը	1	1	1
Մանկավարժներ		32	5
Տնօրեններ		1	1

Դասարաններ		19	
Գրադարաններ		1	
Լաբորատորիաներ		2	

Բ. Նախադպրոցական հաստատությունների կառուցվածքը

Նախադպրոցական հաստատություններ	Խմբերի քանակը		
	Կրտսեր խումբ	Միջին խումբ	Ավագ խումբ
ԱՅԳԵՁԱՐԴԻ մանկապարտեզ» ՀՈԱԿ	-	1-30 երեխա	1-32 երեխա

Գ. Դպրոցի կառուցվածքը

Դպրոց	Դասարաններ											
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
միջնակարգ	2	2	2	2	1	1	2	2	2	1	1	2

2.12 ՄՇԱԿՈՒՅԹ

Համայնքում գործում է մշակույթի տուն՝ կառուցված Ալեքսանդր և Յուրի Թամանյանների նախագծով, որտեղ տեղակայված է գրադարանը, որից օգտվում են հատկապես դպրոցականները, գործող Աշուղ Կաղնու անվան արվեստի դպրոցը, բուժ ամբուլատորիան, մարզադահլիճը, փոստային բաժանմունքը: Մշակույթի տան սենյակները կահավորված չեն,դահլիճում նստարանները գնտվում են ոչ բարվոք վիճակում, չկա անհրաժեշտ տեխնիկա:

Համայնքի մշակութային կազմակերպությունները

Մշակույթի տուն	1
Գրադարաններ	1

2.13 Առողջապահություն

Համայնքն ունի մեկ բուժամբուլատորիա, որն ունի 10 աշխատող, 2 բժշկուհի, ովքեր սպասարկում են համայնքի բնակիչներին իրենց բարեխիղճ և սրտացավ վերաբերմունքով: Բուժամբուլատորիանամբողջությամբ վերանորոգված է գազաֆիկացված ցանկալի կլիներ բուժամբուլատորիան համալրել նորագույն սարքավորումներով:

2.14 ֆիզիկական կուլտուրա և սպորտ

Համայնքում բացակայում են մարզադպրոցներ, սպորտային հրապարակներ: ՀամայնքԻ ֆուտբոլի դաշտը բարեկարգված է:2015թվականին համայնքում Այգեզարդ գյուղի բնակիչներ Աշխարհի և Եվրոպայի ստենդային հրաձգության բազմակի չեմպիոն Երջանիկ Ավետիսյանի նՎաստակավոր մարզիչ Գոռ Բարսեղյանի սեփական միջոցներով կառուցվել էստենդային հրաձգարան ,սպորտային համալիր,որտեղ առկա է միջազգային մակարդակով սպորտային բազա:Մարզադպրոց բացելու նպատակովԱրարատի մարզպետի կողմից համապատասխան գրություն է ուղարկվել ՀՀ կառավարություն՝ համայնքում մարզադպրոց բացելու նպատակով,սակայն մինչև օրս պատասխան չի ստացվել:Մարզադպրոցի առկայությունը լայն հնարավորություն կընձեռնի գյուղի և շրջակա տարածքի գյուղերի պատանիներին զբաղվելու սպորտով, ստենդային հրաձգարանի մասին իրազեկումը լայն հնարավորություն կստեղծի զբոսաշրջության զարգացման համար:

2.15 Աշխատանքի և սոցիալական ծառայություն

Սոցիալական ապահովության ոլորտի հիմնական նպատակն է նպաստել համայնքում բնակչության աղքատության նվազեցմանն ու հաղթահարմանը, մեծացնել ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետությունը՝ ծրագրերի հասցեականության մեծացման և նպատակային ծրագրերի իրականացման միջոցով, բարձրացնել համայնքի բնակչությանը մատուցվող սոցիալական ծառայությունների մատչելիությունը և որակը:

Սոցիալական ապահովության բնագավառում կարևորվում է սոցիալապես խոցելի խմբերին ուղղված սոցիալական աջակցության ծառայությունների ընդլայնումը:

Միջոցառումների իրականացման համար ակնկալվում է պետության և դոնոր կազմակերպությունների աջակցությունը:

Սոցիալական քաղաքականության ոլորտում համայնքապետարանում օրենքով ամրագրված լիազորությունների շրջանակը նեղ է, դրանց գերակշիռ մասը կրում է կամավոր բնույթ:Չնայած դրան՝ գյուղապետարանը, համաձայն տեղական ինքնակառավարման հանրաճանաչ սկզբունքների, պարտավորություն է կրում բազմաթիվ սոցիալական հիմնախնդիրների լուծման համար:

Օրենսդրորեն ամրագրված իրավասությունների շրջանակներում գյուղապետարանը բնակչության սոցիալական հիմնահարցերի լուծման ուղղությամբ իրականացնում է պետության կողմից պատվիրակված և կամավոր լիրազորություններ:

- Հայտնաբերվում եվ միջոցներ են ձեռնարկվում՝ օգնելու համայնքի տարածքում բնակվող սոցիալապես առավել անապահով ընտանիքներին եւ ռիսկային խմբերին պատկանող անձանց սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ,
- Միջոցներ են ձեռնարկվում իրականացնելու սոցիալական ապահովության նպատակային ծրագրեր՝ հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, տարեցների, միայնակ ծերերի, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների, խնամատար ընտանիքների եւ այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ,
- Համագործակցություն է տարվում սոցիալական հիմնահարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների հետ՝ ակտիվացնելով հասարակական կազմակերպությունների գործունեությունը բնակչության սոցիալական կարիքների բավարարման գործում,
- Կազմակերպվում է համայնքապետարան դիմած ընտանիքների սոցիալ-տնտեսական վիճակի ուսումնասիրություն, տրամադրվում է դրամական աջակցություն:

2.16 Գյուղատնտեսություն

Համայնքում գյուղատնտեսության ճյուղերն են՝

Պտղաբուծությունը

- Դաշտավարությունը
- Այգեգործությունը
- Անասնապահությունը

Համայնքում գյուղատնտեսության բնագավառում բնակչության զբաղվածությունը կազմում է 80%: Գյուղացիները զբաղվում են հիմնականում խաղողի,պտղի, բանջարեղենի մշակությամբ:

2.17 Բնության և շրջակա բնական միջավայրի պահպանություն

2012թ-ից համայնքի սանիտարական մաքրման աշխատանքները կատարվում է համայնքապետարանի միջոցներով: Շաբաթական երկու անգամ գյուղում կատարվում է աղբահանություն:

2.18 Արտաքին կապեր և հարաբերություններ

Համայնքը սերտորեն համագործակցում է ԱՄՆ «Խաղաղության կորպուսին»՝ համայնքի բնակիչները իրենց տներում հյուրընկալում են Միացյալ Նահանգներից ժամանած կամավորներին, որոնք այդ ընթացքում աշխատում են երկու ծրագրերով՝ անգլերենի դասավանդում և նախատեսվում է իրականացնել համայնքի զարգացմանն ուղղված մի շարք ծրագրեր:

2.19 Համայնքի ձեռներեցության ոլորտները

	Կազմակերպության թիվը	Զբաղվածների թիվը
Արտադրություն	1	14
Առևտուր և սպասարկում	10	10

3. Համայնքի բյուջեն

Համայնքի բյուջեն եկամտային մասը, ըստ հոդվածների հազար դրամ .

	2016	2017	2018	2019	2020	2021
Վարչական բյուջե	63242.6	64916.0	65300.0	65500.0	65700.0	65960.0
Հարկային եկամուտներ	26315.6	29842.1	30226.1	30400.0	30600.0	30800.0
Հողի հարկ	18774.0	19740.0	19900.0	20000	20100	20200
Գույքահարկ	7371.6	8669.6	8702.1	8776.0	8876.0	8976.0
Տեղական տուրքեր	170.0	183.5	200.0	200.0	200.0	200.0
Ոչ հարկային եկամուտներ						
Վարձակալական վճարներ	1152.0	1324.0	1324.0	1324.0	1324.0	1324.0
Վարչական իրավախախտ. համար						
Դոտացիա պետբյուջեից	35073.9	35073.9	35073.9	35100.0	35100.0	35100.0
Պետ. Բյուջ. Ընթ. դրամաշնորհներ	651.1	-	-	-	-	-
Տեղ. վճար մրց. աճուրդ. կազմ. վճար						
Տեղ. վճար. Աղբահանութ.	50.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
օտարումից մուտքեր		547.0				
Ֆոնդային բյուջե	7973.9	13005.1	13100.0	13200.0	13300.0	13500.0

Շենք,շինութ. Կառուցում 5112	970.9					
Կապիտալ վերանորոգ 5113	3000.0	7700.0	11710.0	11615.0	11808.0	12000.0
Վարչ. Սարքավ.5122	300.0	400.0	400.0	500.0	500.0	500.0
Այլ սարքավորումներ 5129	400.0	545.0	500.0	600.0	500.0	500.0
Նախագծանախահաշ. 5134	303.0	360.0	490.0	485.0	492.0	500.0
Գեոդեզիական քարտեզ. 5133	3000.0	4000.1				
Վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդ	4084.3	5125.7	5200.0	5200.0	5300.0	5400.0
Ֆոնդային մասի տարեսկզբի ազատ մնացորդ	3889.6	7879.4	7900.0	8000.0	8000.0	8100.0
Եկամուտներ ընդամենը	71216.5	77921.1	78400.0	78700.0	78900.0	79400.0

Համայնքի բյուջեն ծախսային մասը, ըստ հոդվածների հազար դրամ

	2016	2017	2018	2019	2020	2021
Ընդամենը վարչական բյուջե	63242.6	64916.0	65300.0	65500.0	65700.0	65900.0
Տեղական ինքնակառավարում	19538.0	20108.0	21346.0	22404.0	22425.0	22505.0
Նախադպրոցական հիմնարկներ	19050.0	19050.0	19100.0	19100.0	19200.0	19250.0
Արվեստի դպրոց	5740.5	5750.0	5750.0	5762.0	5770.0	5775.0
Վարչական բյուջեի պահուստային ֆոնդ	3501.1	4469.0	3250.0	3260.0	3265.0	3275.0
Մասնագ. բժշկ. ծառայ.	150.0	150.0	150.0	150.0	150.0	150.0
Հանրակրթական ուսուցում	300.0	300.0	300.0	300.0	300.0	300.0
Արտաքին լուսավորություն	1280.0	1280.0	1280.0	1300.0	1310.0	1310.0
Սոց. Պաշտպանություն	4850.0	4600.0	4900.0	5000.0	5050.0	5100.0
Սպորտային միջոցարումներ	150.0	150.0	150.0	150.0	150.0	150.0
Հասարակական կազմակ. աջակցություն	250.0	250.0	250.0	250.0	250.0	250.0
Շրջակա միջավայրի սան. մաքրում	1000.0	1000.0	1000.0	1000.0	1000.0	1000.0
Թատրոն	150.0	150.0	150.0	150.0	150.0	150.0
կենսաբազմազանություն	250.0	250.0	250.0	250.0	250.0	250.0
Մշակ. միջոցառ./հատուկ նպ. այլ նյութեր/	5300.0	5300.0	5300.0	5300.0	5300.0	5300.0
Անշարժ գույքի չափագրում և գրանցում	235.0	235.0	250.0	250.0	250.0	250.0
Հանգիստ. մշ. և կրոն						
Գրադարանային ծառայ.	874.0	874.0	874.0	874.0	880.0	885.0
Մայրուղիների և փողոցների հիմնանորոգում	874.0	1000.0	1000.0			
Ֆոնդային բյուջե	7973.9	13005.1	13100.0	13200.0	13300.0	13500.0
Շենք, շինութ. Կառուցում 5112	970.9					
Կապիտալ վերանորոգում 5113	3000.0		11710.0	11615.0	11808.0	12000.0
Վարչ. Սարքավորումներ 5122	300.0	400.0	400.0	500.0	500.0	500.0
Այլ սարքավորումներ 5129	400.0	450.0	500.0	600.0	500.0	500.0

Նախագծանախահաշ. 5134	303.0	360.0	490.0	485.0	492.0	500.0
Գեոդեզիակ. Քարտեզ. 5133	3000.0	4000.1				
Ընդամենը	71216.5	77921.1	78400.0	78700.0	78900.0	79400.0

4. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ՝



4.1 Համայնքի ավագանի

Ավագանու ընտրված անդամների թիվը 9

Ավագանու անդամների կազմը

ՀՀ	Ազգանուն, Անուն, Հայրանուն	ծննդյան թիվ	կրթությունը	Կուսակցությունը	քանի տարի է ավագանու անդամ ընտրվել
1.	Ավետիսյան Ազատ Ալբերտի	1982	միջնակարգ	ՀՀԿ	2
2.	Ավդոյան Ֆրիկ Սուտոյի	1956	ութամյա	անկուսակցական	1
3.	Դանիելյան Գեղանուշ Գեղամի	1972	բարձրագույն	ՀՀԿ	1
4.	Մանուկյան Եղիշե Գագիկի	1990	բարձրագույն	անկուսակցական	1
5.	Մարգարյան Արմենուհի Սարդոնի	1971	բարձրագույն	ՀՀԿ	2
6.	Մնացականյան Գևորգ Մարատի	1975	բարձրագույն	ՀՀԿ	3
7.	Մնացականյան Գրիգոր Վահանի	1976	միջնակարգ	անկուսակցական	1
8.	Պետրոսյան Ռազմիկ Գրիշի	1954	բարձրագույն	ՀԱԿ	2
9.	Սարգսյան Խաչիկ Աշոտի	1948	միջնակարգ	Հնչակյան	3

4.2 Համայնքապետարանի համայնքային ծառայողների ցանկը

Պաշտոն
Աշխատակազմի քարտուղար
Աշխատակազմի գլխավոր մասնագետ
Աշխատակազմի առաջատար մասնագետ
Աշխատակազմի առաջատար մասնագետ
Աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ
Աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ

4.3 Համայնքի ենթակայության տակ գտնվող հաստատությունների ցանկը

1. ,Այգեզարդի մանկապարտեզ» ՀՈԱԿ
2. Արվեստի դպրոց ՀՈԱԿ

4.4 Տեխնիկական հագեցվածությունը

	Համայնքապետարան	Համայնքային ենթակայության հիմնարկ
Համակարգիչ, քանակ	4	1
Պատճենահանող սարք, քանակ	3	1
Տպիչ, քանակ	3	-
Ներքին համակարգչային ցանց, այո/ոչ	ոչ	ոչ

5. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

5.1 Տեսլականը

Այգեզարդ համայնքի **տեսլականն է՝** ստեղծել բարգավաճող համայնք, որտեղ յուրաքանչյուր համայնքի բնակիչ ունի իր տեղն ու դերը համայնքի զարգացման գործում և պատասխանատվություն է կրում համայնքի նկատմամբ: Բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները, համայնքը դարձնել բարեկարգ, մաքուր և բնակիչների համար հաճելի բնակավայր:

5.2 Նպատակը

Համայնքի ռազմավարական հիմնական **նպատակներն են՝**

- Ապահովել խոշոր կապիտալ ներդրումներ համայնքի ճանապարհային տնտեսության, հանգստի, համայնքի կենտրոնի և զբոսայգու տարածքների բարեկարգման բնագավառում:
- Ապահովել համայնքի կրթության, մշակույթի և սպորտի բնագավառների կազմակերպությունների անխափան և նպատակային գործունեությունը, իրականացնել այդ կազմակերպությունների զբաղեցրած շենքերում հիմնական՝ վերանորոգման և գույքի ձեռքբերման աշխատանքներ:
- Համայնքի տարածքում զարգացնել փոքր և միջին բիզնեսը:
- Միջոցներ ձեռնարկել համայնքի սոցիալապես անապահով ընտանիքների, փախստականների սոցիալական, բնակարանային, կոմունալ-կենցաղային պայմանների բարելավման համար:
- Բարձրացնել համայնքի բնակչությանը մատուցվող ծառայությունների և սպասարկումների մակարդակը և որակը, բարելավել համայնքի բյուջեի եկամուտների հավաքման աշխատանքները:

5.3 ՈՒԹՀՍ (SWOT) ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՈԼՈՐՏ	Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր	Հնարավորություններ	Սպառնալիքներ
Քաղաքացիների և	Հեշտ ադապտացվող	- մասնագետները	- փոքր և միջին	տնտեսակ

տնտեսավարող սուբյեկտների իրավունքների պաշտպանություն	աշխատանքա-յին ուժ	չեն օգտագործել իրենց մասնագիտական գիտելիքները և հմտությունները երկար տարիներ - միջազգային ստանդարտների վերաբերյալ գիտելիքի պակաս - լավ կազմակերպված աշխատանքային բորսայի բացակա-յություն - օրենսդրական ոչ կատարյալ դաշտ - թաքնված գործազրկության բարձր մակարդակ աշխատանք գտնելու օժանդակող մասնավոր գործա-կալությունների բացակայություն	բիզնեսի զարգացում - տարբեր միջազգային կազմակերպությունների գործունեություններ ներդրումների հնարավորություններ	ան գործունեության համար անհամապատասխան շրջակա միջավայր
Ֆինանսական ոլորտ	Տեղական տուրքերի հավաքագրման վերահսկում	Վարչական պատասխանատվության ենթարկում:	Տեղական տուրքերի 100% հավաքագրում	Մշտական հսկողության սահմանում, խուսափողներին վարչական պատասխանատվության ենթարկում:
Հանրային միջոցառումների կանոնակարգում	Հանրային միջոցառումների պարբերաբար անցկացում	Միջոցառումների ժամանակ կարգ ու կանոնի բացակայություն, բնակչության ակտիվ մասնակցության բացակայություն	Ունենալով մի քանի կրթօջախներ հնարավորություն է ստեղծվում պատշաճ ձևով մտցնել հասարակության մեջ կարգ ու կանոն	
Պաշտպանության կազմակերպում			Արտակարգ իրավիճակի դեպքում համայնքի ռեսուրսների լիիրավ օգտագործում և համագործակցություն ԱԻՆ-ի հետ	
Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն	Նախորդ տարիների համեմատ համայնքի ջրամատակարարման որակի բարձրացում	Ապօրինի շինությունների առկայության, կանաչապատ տարածքների բացակայություն, համայնքի որոշ թաղամասերում խմելու ջրի մատակարարման բացակայություն	Ապօրինի շինությունների կանխարգելում, խմելու նոր ջրագծերի կառուցում	Հեղինակային և տեխնիկական հսկողության բացակայություն
Հողօգտագործում	Մշակվող տարածքների առկայություն	Ոռոգման ջրագծերի նորոգում և նոր ջրագծերի անցկացում	Բերրի հողերի հնարավորություն	

Հաղորդակցություն, տրանսպորտ և կապ	Բնակչության ակտիվ հաղորդակցության գյուղապետարանի հետ,տարբեր կայանների առկայություն(ինտերնետի), Ուսանողական անվճար ավտոբուսի առկայություն	Գյուղամիջյան և դաշտամիջյան ճանապարհների բարեկարգում, անվտանգ երթևեկության կազմակերպում	Ասֆալտապատում, կանգառների տեղադրում	Վթարների հավանականություն
Առևտուր և ծառայություն	Անցում առևտրի և սպասարկման առավել քաղաքակիրթ մեթոդների	Սանիտարահիգիենիկ վիճակի բացակայություն	Ուսումնասիրություններ և մշտական աշխատանք առևտրի և սպասարկման օբյեկտների հետ:	Հակահիգենիկ սննդի մատակարարում
Կրթություն	Մի քանի կրթօջախների առկայություն	Կրթական ոլորտի բարեփոխումների կարիք	Բարձորակ մասնագետների առկայություն:	Ազգային գաղափարախոսության պակաս
Մշակույթ	Գործում է մշակույթի տուն պարի խմբերով արվեստի դպրոց գրադարանի առկայություն	մշակույթի տան և գրադարանի ոչ բարվոք վիճակ, աշխույժ մշակութային կյանքի բացակայություն	Ավելացնել նոր խմբակների տեսակներ, վերանորոգել, կահավորել մշակույթի տան սենյակները	Ազգային մշակույթի պակաս
Երիտասարդություն	Իրավունքի լիարժեք տիրապետում	Զբաղվածության պակաս	Կրթելու հնարավորություն	Աշխատատեղերի բացակայություն
Առողջապահություն	Բուժամբուլատորիայի առկայություն	Նեղ մասնագետների բացակայություն	Բուժսարքավորումների ավելացում	Բուժսպասարկման վերահսկողություն
Ֆիզիկական կուլտուրա և սպորտ	Ֆուտբոլի դաշտի վերանորոգում	Համայնքում բացակայում են մարզադպրոցներ, սպորտային հրապարակներ:	Ֆուտբոլի դաշտի բարեկարգում, սպորտային համատեղ միջոցառումների իրականացում, ժամանակակից մարզախաղահրապարակային համալիրների կառուցման ծրագրերի իրականացում:	Հիվանդ սերունդ ունենալը
Աշխատանքի և սոցիալական ծառայություն	Սոցիալական ապահովության բնագավառում կարևորվում է սոցիալապես խոցելի խմբերին ուղղված սոցիալական աջակցության ծառայությունների ընդլայնումը:	Համայնքի բնակչության սոցիալական ծանր վիճակ	Սոցիալական ապահովության ոլորտի հիմնական նպատակն է նպաստել համայնքում բնակչության աղքատության նվազեցմանն ու հաղթահարմանը, մեծացնել ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետությունը ծրագրերի հասցեականության մեծացման և նպատակային ծրագրերի իրականացման միջոցով, բարձրացնել համայնքի բնակչությանը մատուցվող սոցիալական ծառայությունների մատչելիությունը և	Աշխատանքի բացակայություն

			որակը:	
Գյուղատնտեսություն	Համայնքի գյուղացիական տնտեսությունները հիմնականում զբաղվում են մի շարք բանջար-բոստանային կուլտուրաների՝ լոլիկի, վարունգի, պղպեղի, սմբուկի, ինչպես նաև խնձորի, տանձի, դեղձի, ծիրանի, խաղողի մշակությամբ:	Գյուղ մթերքի իրացման հետ կապված խնդիրներ, ոռոգման ջրի բարձր սակագին	Համայնքում գյուղմթերքի մեծածախ շուկայի կազմակերպում	Երաշտը, բնական աղետները
Բնության և շրջակա բնական միջավայրի պահպանություն	Համայնքում աղբահանությունը կազմակերպվում է շաբաթը երկու անգամ համայնքի միջոցների հաշվին	Տարբերակված աղբահանության համակարգի բացակայություն Բնակչության իրազեկության ցածր մակարդակ Փոքր աղբարկղերի բացակայություն	Գյուղապետարանի կողմից իրականացվող վերահսկողությունը անասնապահությամբ զբաղվողների աղբահանության աշխատանքների վրա	
Արտաքին կապեր և հարաբերություններ		Միջազգային դոնոր կազմակերպությունների վերաբերյալ պարբերաբար տեղեկատվության հավաքագրման և նրանց հետ կոնտակտային կապերի ստեղծման անհրաժեշտություն ներդրումային համատեղ ծրագրերի մշակում և իրականացում		

Համայնքի 2016-2021թթ. ֆինանսապես ապահովված ընդհանուր և ոլորտային ծրագրերի ամփոփագիր

h	Ծրագրի անվանումը	Չափի միավորը	Ծրագրի քանակական ծավալը	Ծրագրի արժեքը, հազ. դրամ	Ծրագրի կատարումն ըստ տարիների						Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները		
					2016	2017	2018	2019	2020	2021	Համայնքի բյուջե	Դոնոր կազմ.-եր	Պետբյուջե
1.	Համայնքի գլխավոր հատակագիծ	հատ	1	4000.0		4000.0					4000.0		
2.	Ոռոգման ցանցերի կիսախողովակների տեղադրում	կմ	1.3	10000.0			1000. 0	1000.0			2000.0		
3.	Դաշտամիջյան ճանապարհների հարթեցում, խճապատում			16000.0		4000.0	3000.0	3000.0	3000.0	3000.0	16000.0		
4.	Գյուղամիջյան ճանապարհների կոպճապատում			2900.0		2900.0					2900.0		
5.	Գյուղամիջյան ճանապարհների ասֆալտապատում	քմ	2500	18000.0		3000.0	4000.0	4000.0	4000.0	3000.0	18000.0		
6.	համայնքի մարզադաշտի բարեկարգում			6000.0		1000.0	2000.0	1000.0	1000.0	1000.0	6000.0		
7.	գյուղամիջյան զբոսայգու բարեկարգում			5000.0		1000.0	1000.0	1000.0	1000.0	1000.0	5000.0		
8.	Մշակույթի տան կապիտալ նորոգում			150000.0		1000.0	1000.0	1000.0	1000.0	1000.0	5000.0		
	Ընդամենը												

Աղյուսակ 7. Համայնքի 2016-2020 թ.թ. բյուջեների մուտքերի և դրանց հաշվին կատարվող ընդհանուր ու ոլորտային ծրագրերի ծախսերի ցուցանիշների համեմատությունը և վերլուծությունը

Հ/հ	Ցուցանիշի անվանումը	2016	2017	2018	2019	2020	2021
1.	**Համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերը*, այդ թվում՝**	63022.8	64916.0	65000.0	65200.0	65300.0	65500.0
1.1	Վարչական բյուջեի ընդհանուր մուտքերը	62911.8	64369.0	65000.0	65200.0	65300.0	65500.0
1.2	Ֆոնդային բյուջեի ընդհանուր մուտքերը, այդ թվում՝	111.0	547.0	0	0	0	0
	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե հատկացվող գումարը	0	0	0	0	0	0
2.	**Համայնքի ընդհանուր և ոլորտային ծրագրերի ծախսերը, այդ թվում՝**	57897.0	60000.0	63000.0	63500.0	63700.0	64000.0
2.1	Ընթացիկ ծախսեր	45897.0	47900.0	50840.0	51250.0	51300.0	51400.0
2.2	Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր	12000.0	12100.0	12160.0	12250.0	12400.0	12600.0
3.	**Համայնքի բյուջեի պահուստային ֆոնդ, այդ թվում՝**	3501.1	4469.0	3250.0	3260.0	3265.0	3275.0
3.1	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդ	3501.1	4469.0	3250.0	3260.0	3265.0	3275.0
3.2	Ֆոնդային բյուջեի պահուստային ֆոնդ	0	0	0	0	0	0

հազ. դրամ

*) Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե հատկացվող գումարը չի մտնում բյուջետային ընդհանուր մուտքերի մեջ

Համայնքի տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման կամ դրանց փոփոխման (լրացման) մասին դրույթներ

Համայնքի տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերից (գլխավոր հատակագիծ, գոտիավորման նախագիծ, ընթացիկ քաղաքաշինական քարտեզ, քաղաքաշինական կադաստր, քաղաքաշինական կանոնադրություն և այլն) կա միայն քաղքաշինական կանոնադրությունը:

Քանի որ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ համայնքի տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի նախագծման (մշակման) պատվիրատուն համայնքն է, ժամանակահատվածում նախատեսվում է համագործակցություն ծավալել Հայաստանում գործող նախագծային ինստիտուտների հետ՝համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքների նախահաշիվները, համայնքի բյուջեով նախատեսելու համար:

Շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված նախատեսվող միջոցառումներ

2016-2021թ.թ. ընթացքում համայնքի սեփականություն համարվող հողերի, անտառային և ջրային տարածքների, ինչպես նաև բնության և շրջակա միջավայրի պահպանության ոլորտում նախատեսվում է կազմակերպել և իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- լայն բացատրական աշխատանք կատարել բնակչության հետ՝ կենցաղային աղբը չթափելու դրա համար չնախատեսված վայրերում, զերծ մնալու բնության և շրջակա միջավայրի աղտոտումից ու վնասումից,
- սահմանել վերահսկողություն համայնքի բնակավայրերի ջրամատակարարման ջրային ավազաններում՝ արգելելու անասունների մուտքն ավազաններ, կանխարգելելու բնության և շրջակա միջավայրի աղտոտումը և վնասումը, ինչպես նաև սուր վարակիչ հիվանդությունների առաջացման և տարածման վտանգը համայնքում,
- յուրաքանչյուր տարի գարնանը համայնքում կազմակերպել «Մաքուր համայնք» կարգախոսով 2-3 շաբաթօրյակներ՝ իրականացնելու բնության և շրջակա միջավայրի մաքրության, ծառատնկման աշխատանքներ, դրանց ներգրավելով նաև երիտասարդներին և դպրոցականներին:

Համայնքում գործարար միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումներ

Չնայած ՀՀ գործող օրենսդրությամբ ՏԻՄ-երն այս ոլորտում առայժմ պարտադիր լիազորություններ գրեթե չունեն, այնուամենայնիվ հաշվի առնելով, որ 2016 թվականի հուլիսի 29-ին ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել ՀՀ 2016-2025 թվականների տարածքային զարգացման ռազմավարությունում ամրագրված մոտեցումները, ինչպես նաև այն հանգամանքը, որ համայնքի ՏԻՄ-երը շահագրգռված են համայնքում գործարար միջավայրի բարելավմամբ և պատրաստակամ են ըստ ամենայնի օժանդակել այս ոլորտում ցանկացած նոր նախաձեռնության, քանի որ այն մեծապես կնպաստի համայնքում նոր աշխատատեղերի ստեղծմանը, բնակչության եկամուտների ավելացմանը և վճարունակության բարձրացմանը, համայնքի բյուջետային սեփական միջոցների հավաքագրման մակարդակի բարձրացմանը և ծավալի մեծացմանը, և, այս ամենի արդյունքում՝ համայնքի ընդհանուր զարգացմանը:

Համայնքում գործարար միջավայրի բարելավմանն ուղղված՝ 2016-2021թ.թ. ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- ըստ ամենայնի աջակցել համայնքում գործող արտադրական ձեռնարկություններին՝ աստիճանաբար ընդլայնելու արտադրության ծավալները և ավելացնելու աշխատատեղերի քանակը,
- աջակցել համայնքում նոր արտադրություններ և աշխատատեղեր ստեղծելու նախաձեռնություն ցուցաբերող գործարարներին՝ տրամադրելով նրանց գործունեություն իրականացնելու համար համայնքային սեփականություն հանդիսացող գույքի վարձակալման, տեղական տուրքերի և վճարների զեղչով արտոնություններ,
- համայնքում խթանել գյուղատնտեսության, անասնապահական և թռչնապահական մթերքների (մասնավորապես՝ գյուղմթերքի, կաթի, մսի, ձվի) արտադրության, հանձնման և վերամշակման արտադրամասերի ստեղծումը, գործարկումը և զարգացումը,
- համայնքում կազմակերպել և աստիճանական զարգացնել տնային պայմաններում բնական հյութերի արտադրությունը և իրացումը,
- համայնքում խթանել առևտրի և ծառայությունների փոքր ու միջին նոր կետերի բացումը, բնակչությանը և հյուրերին պատշաճ մակարդակով սպասարկումը՝ պաշտպանելով դրանց սեփականատերերի իրավունքները և շահերը,
- աստիճանաբար նորոգել և բարեկարգել միջհամայնքային ճանապարհները և փողոցները, անցկացնել արտաքին լուսավորության համակարգերեր, տեղադրել ճանապարհային նշաններ՝ նպաստելու համայնքում գործարար միջավայրի բարելավմանը և բիզնեսի զարգացմանը,

Աղետների ռիսկի կառավարման հիմնական մոտեցումներ

Համայնքում աղետների ռիսկի կառավարմանն ուղղված՝ 2016-2021թ.թ. ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- համայնքի աղետների ռիսկերի կառավարման հարցերում շարունակել համագործակցությունը հանրապետական համապատասխան մարմինների հետ՝ մասնավորապես ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հետ,
- ՀՀ կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 25-ի N 1351-Ն որոշմամբ սահմանված կարգով ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն ներկայացնել սեյսմիկ ռիսկի գնահատման աշխատանքների հայտ, որի արդյունքում պետք է կազմվի համայնքի սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզը,
- համայնքի բնակչության իմացության, հմտությունների, գիտելիքների մակարդակի ուսումնասիրում և համայնքում առկա ռեսուրսների բացահայտում, որոնք հնարավոր է ուղղել աղետների ռիսկի նվազեցմանը նպաստող համայնքահեն միջոցառումների պլանավորմանն ու իրականացմանը,
- համայնքի խոցելիության և կարողությունների գնահատում, ներառյալ այդ գործընթացի կազմակերպման և իրականացման խմբի ձևավորումը, նախապատրաստական աշխատանքները, տվյալների հավաքագրումը և հետազոտումը՝ համապատասխան գործիքների և մեթոդների ընտրությամբ, վերլուծական աշխատանքների իրագործումը՝ յուրաքանչյուր փուլում ձեռնարկվող քայլերի և ակնկալվող արդյունքների ամրագրմամբ և ձևակերպմամբ,
- համայնքում աղետների ռիսկի կառավարման գործողությունների և միջոցառումների պլանի կազմում և իրականացում,
- բերքի պահպանման նպատակով բնակավայրերում հակակարկտային կայաններ տեղադրելու միջոցառումների ձեռնարկում՝ ֆինանսավորման արտաքին աղբյուրներից (պետություն, միջազգային և տեղական դոնոր կազմակերպություններ, մասնավոր ներդրողներ) անհրաժեշտ միջոցների հայթայթում,
- համայնքում աղետների ռիսկի կառավարման կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում և իրականացում:

Համայնքի կոմունալ ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված միջոցառումներ

Համայնքի կոմունալ ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված՝ 2016-2021թ.թ. ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները և միջոցառումները՝

- համայնքի սեփականություն համարվող կոմունալ ենթակառուցվածքների պահպանում, շահագործում, ըստ հնարավորությունների՝ նորոգում և զարգացում,
- համայնքի կոմունալ տնտեսության աշխատանքի կազմակերպում,
- վերահսկողություն համայնքի բնակչությանը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր կազմակերպությունների կողմից մատուցվող կոմունալ ծառայությունների (գազամատակարարում, էլեկտրամատակարարում, աղբահանություն և սանիտարական մաքրում, բնակավայրի բարեկարգում և կանաչապատում և դրանց պահպանում և այլն) շրջանակի աստիճանական ընդլայնման և որակի անշեղ բարձրացման նկատմամբ,

Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցությանն ուղղված միջոցառումներ

Համայնքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը ոլորտում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- համայնքի բնակչության իրազեկվածության բարձրացում՝ ՀՀ տեղական ինքնակառավարման ոլորտի օրենսդրության և համայնքի ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ,
- համայնքի կարիքների և հիմնախնդիրների պարբերական քննարկում, վերլուծում և գնահատում՝ ֆոկուս-խումբ քննարկումների, համայնքային հանդիպումների, ժողովների և բնակիչների հետ անմիջական շփումների և երկխոսությունների միջոցով,
- բնակիչների ներգրավում համայնքի բյուջեի և զարգացման ծրագրերի մասնակցային պլանավորման, իրականացման, մշտադիտարկման և գնահատման գործընթացներում,
- համայնքի բնակիչների շահերի պաշտպանություն և համախմբում՝ համայնքի որոշակի խնդիրների լուծման, հանրային ծառայությունների մատուցման շուրջ,
- համայնքի ՏԻՄ-ի (ղեկավար, ավագանի), աշխատակազմի, ակտիվ բնակիչների շարունակական կրթում և վերապատրաստում տեղական ինքնակառավարմանը բնակչության մասնակցության բնագավառում:

7. ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Այսպիսով, համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը հիմք կհանդիսանա համայնքի տարեկան ծրագրերի և բյուջեների մշակման աշխատանքները կազմակերպելիս: Անցյալ տարիների փորձը ցույց տվեց, որ տեղական ինքնակառավարման մարմինների արդյունավետ աշխատանքը մեծապես կախված է բյուջետավարման գործընթացի ճիշտ կազմակերպումից:

Շատ կարևոր է եկամուտների աղբյուրներ գտնելը, ֆինանսական միջոցների արդյունավետ հավաքագրման կազմակերպումն ու նպատակային օգտագործումը:

Ելնելով համայնքի զարգացման հնգամյա ծրագրի ռազմավարությունից և ընդհանուր նպատակներից, համայնքապետարանի աշխատակազմը մշակում է կոնկրետ ծրագրեր, որոնցով կարելի է հարց ներկայացնել հանրապետական բյուջեից ներդրումներ ստանալու համար, փնտրել ինվեստիցիաների նոր աղբյուրներ, ներգրավել բնակիչների սեփական միջոցները, տարբեր սոցիալական հիմնադրամների միջոցները: